# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ
# ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՊԱՏԳԱՄԸ
# ՍՓՅՈՒՌՔԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-ԻՆ ՏԱՍՍ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ԴԻՄԵԼ ԷՐ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ, ԽՆԴՐԵԼՈՎ ՆՈՐ ՏԱՐՎԱ ԵՎ Ս. ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ՆՐԱ ՊԱՏԳԱՄԸ, ՈՒՂՂՎԱԾ Ի ՍՓՅՈՒՌՍ ԱՇԽԱՐՀԻ ՑՐՎԱԾ ՀԱՅ ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ԺՈՂՈՎՐԴԻՆ։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ, ԸՆԴԱՌԱՋԵԼՈՎ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՂԱԾ ԽՆԴՐԱՆՔԻՆ, ՏՎԵՑ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ Ս. ԾՆՆԴՅԱՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՊԱՏԳԱՄԸ.

Ամենայն Հայոց Հայրապետության Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնեն հայրական ողջույն կուղղենք և կօրհնենք մեր հայ հավատացյալ ժողովուրդը, շնորհավորելով Քրիստոսի Ս. Ծնունդը և նոր տարին։ Ի սփյուռս աշխարհի ապրող Մեր հարազատ բոլոր զավակներուն Մենք կմաղթենք երջանիկ նոր տարի մը, ուրախություններով և առաքինի գործերով լեցուն։

Կաղոթենք ջերմապես առ Աստված՝ տարին որ կուգա, հետը բերե բոլորին համար արշալույսը նոր ժամանակներու, բարի և խաղաղ օրերով։

Արդարության և խաղաղության արեգակի շողերը թող իջնեն առատորեն աշխարհի և մարդոց վրա, որպեսզի աճի հոգիներու մեջ բարի կամեցողությունը և մարդիկ ու ժողովուրդները սորվին զիրար հասկնալ, զիրար հարգել ու գնահատել եղբայրաբար։

Պատերազմները և ատելության ոգին կրնան քանդել միայն և տառապանք պատճառել բոլորին անխտիր։ Փոխադարձ սերը և հանդուրժողական ոգին, սակայն, կրնան ստեղծարար և երջանկաբեր ըլլալ բոլոր մարդոց ու ազգերու համար։

Երանի՜ անոնց, որ 1957-ին պիտի ապրին ու գործեն հանուն խաղաղության և ժողովուրդներու եղբայրության։

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

29 դեկտեմբեր 1956
ԷՋՄԻԱԾԻՆ

